Ռաֆֆի

Զալալեդդին

ԺԱ

Բարդուղիմեոս առաքյալի վանքի սարսափելի անցքից հետո, գիշերը վանքում մնալով, իսկ առավոտյան դեռ արևը չծագած այնտեղից հեռանալու ժամանակ, Սարհատը նոր նկատեց, որ Մըստոն չկար: Նրա ընկերները կասկածանքի մեջ ընկան, մի՛ գուցե պատանի քուրդը մատներ նրանց: Նա այնքան խորամանկ էր և հանդուգն, որ ամեն բան սպասելի էր նրանից:

Ես Մըստոյի ազնվության վրա կասկածել չեմ կարող, ասաց Սարհատը. և ավելի այն պատճառով, որ նա քուրդ է: Քուրդը կեղծ մարդ չէ. թե թշնամության մեջ, թե բարեկամության մեջ նա իր գույնը չի փոխում:

Բայց Մըստոն ամբողջ երեք օր չերևաց: Հետո հայտնվեցավ նա:

Գտա, եղավ նրա առաջին խոսքը, փաթաթվելով Սարհատի վզին:

Ո՞ւմ գտար, հարցրեց Սարհատը շփոթվելով:

Ասլիին. նրան, որին դու սիրում ես:

Սարհատը ուրախությունից մի տեսակ արբեցության մեջ ընկավ:

Մըստոն մի ըստ միոջե սկսեց պատմել իր հանդիպելը փաշայի սուրհանդակի հետ, նրան սպանելը, հետո նամակն առնելով, և ինքն սուրհանդակ ձևանալով, շեյխի բանակը մտնելը և այնտեղ գերի աղջկանց թվում Ասլիին գտնելը:

Դու հաստատ գիտե՞ս, որ նա շեյխի բանակումն է, հարցրեց Սարհատը վրդոված ձայնով:

Ինչպես չգիտեմ, աչքովս տեսա, հետը խոսեցի, պատասխանեց Մըստոն ուրախ կերպով:

Նա ճանաչե՞ց քեզ:

Հենց որ տեսավ, իսկույն ուզում էր վազել ինձ մոտ. ես նշան արեցի, նա զգուշացավ:

Ինչպե՞ս կարողացար տեսնել նրան:

Մըստոն պատմեց, թե երբ նամակը տվեց շեյխին, նա հրամայեց մի օր սպասել, մինչև ինքն իր իշխանների հետ խորհուրդ կանի և պատասխանը կգրի: Նրան տեղ տվեցին շեյխի վրանի մոտ և հրամայեցին կերակրել: Այն ժամանակ նա գտավ «իրանցից» մեկին, որը կրոնով եզրդի է, որին առաջուց ճանաչում էր: Նա այժմ շեյխի մերձավոր սպասավորներից մեկն է, որ նրա համար չիբուխ է լցնում: Այդ մարդը Մըստոյին տարավ իր մոտ, և որպես իր կրոնակցին ու հայրենակցին, սկսեց հյուրասիրել: Մըստոն կարող էր նրան հավատալ, որպես իր վաղեմի բարեկամին, և խնդրեց ցույց տալ իրան գերիները, և նրանց մեջ գտավ Ասլիին: Հետո նրան հայտնեց իր խորհուրդը, ասելով, թե եկել է գողանալու այն աղջկան, թե այն աղջիկը իր տիրոջ նշանածն է, որին շատ սիրում է: Մըստոյի հայրենակիցը խոստացավ ինքը ծածուկ դուրս բերել աղջկան բանակից և հանձնել ում որ կասի նա:

Սարհատը խորին ապշությամբ լսում էր այս պատմությունը, դժվարությամբ հավատալով իր ականջներին: Նա հարցրուց.

Դու հավատո՞ւմ ես, որ քո հայրենակիցը կկատարե իր խոստումը:

Եզիդին շուտ չէ խոստանում, բայց երբ խոսք տվեց, կատարում է իր խոսքը, պատասխանեց Մըստոն մի առանձին հպարտությամբ:

Հետո նա ավելացրուց, թե մի գաղտնիք, որ իրան առաջուց հայտնի էր այն մարդու վերաբերությամբ, ավելի առիթ է տալիս հավատալ նրա խոստմունքին: Այդ մարդու եղբորը, ասաց Մըստոն, մի քանի տարի առաջ սպանել տվեց շեյխը. հիմա նա մտել է շեյխի մոտ որպես սպասավոր, որ կարողանա իր եղբոր վրեժը առնել: Շեյխը չէ ճանաչում, թե նա սպանվածի եղբայրն է կամ կրոնով եզիդի է:

Այսպիսի մարդուն հավատալու է, համոզվեցավ վերջապես Սարհատը: Բայց նա ինչպե՞ս կարող է նրան դուրս բերել բանակից:

Նա կհագցնի Ասլիին տղամարդի շորեր, և Ասլին ինքը դուրս կգա բանակից: Մըստոն քիչ խելք չունի, ամեն բան կարգադրել է, ինչ որ պետք է: Մենք այս գիշեր պետք է պատրաստ լինենք բանակից փոքր ինչ հեռու մի ձորի մեջ, այնտեղ մի հին տանձենի կա, նրա մոտ: Ասլին կգա այնտեղ և մեզ կգտնի:

Գերիների թիվը շա՞տ է, հարցրեց Սարհատը մի փոքր մտածելուց հետո:

Հարյուրի չափ կնիկներ ու աղջիկներ ինքը շեյխը ընտրել է իր համար, մի քանի վրաններ լիքն են, որ կազմված են իր վրանի մոտ:

Մյուս քրդերը նույնպես ունեն: Մարդ չկա, որ մի քանի հատ բերած չլինի, շատերին վաճառում են, ուշնեցի հրյաները գնում են, որ տանեն կրկին հայերի վրա ծախեն: Շատ էժան է, մի աղջիկը մի արծաթ մեջիդիայով (1 ռուբլի 20 կոպեկ) կարելի է առնել:

Սարհատի մի փոքր պայծառացած դեմքը կրկին մթնեց, կրկին տիրեցին նրա սրտին դա՛ռն ցավերը…

Այս խոսակցությունները Մըստոյի և իր տիրոջ մեջ անց էին կենում առանձին, հեռացած մի փոքրիկ աղբյուրի մոտ, որ բղխում էր լեռնային ապառաժի ճեղքից: Նույն ժամուն նրա ընկերները պառկած էին ավելի հեռու, խոտերի վրա, գիշերային արշավանքից հանգստանալու համար: Սարհատը մոտեցավ նրանց, զարթեցրեց և հաղորդելով Մըստոյի բերած լուրերը, հայտնեց, թե ինքը պետք է գնա դեպի Զալալեդդինի բանակը:

Մենք քեզանից չենք բաժանվի, պատասխանեցին ընկերները: